ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ԱՍՏՂԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 29

04/09/2017

ԱՍՏՂԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 05-013-305-018
ԾԱԾԿԱԳՐՈՎ 1.159 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՅԼ ՀՈՂԱՏԵՍՔԻ
ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ
ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով , ՏԻՄ-ի մասին ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի և ՀՀ կառավարության 29.12.2011թ. թիվ 1918-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով այն հանգամանքը , որ 05-013-305-018 կադաստրային ծածկագրով հողամասը երկար տարիներ չի ծառայել իր նպատակային նշանակությանը , այլ օգտագործվել է որպես աղբավայր , սակայն համապատասխան պետ գրանցում չի ստացել , նշված հողամասը համայնքում օրինական աղբավայրի տարածք դրածնելու համար .

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Չեղյալ համարել համայնքի ավագանու 18.07.2017թ. թիվ 23 որոշման 2-րդ կետի պահանջները.

2. Հավանություն տալ համայնքային սեփականություն հանդիսացող 05-013-305-018 ծածկագրով 1.159 հա մակերեսով նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսականից փոխադրել կապի , տրանսպորտի , էներգետիկայի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի նպատակային նշանակությանը , իսկ գործառնական նշանակությունը՝ այլ հողատեսքի հողերի կազմից փոխադրել կոմունալ ենթակառուցվածքների հողերի գործառնական նշանակության:

3. Առաջարկել համայնքի ղեկավարին գործընթացը կազմակերպելու համար համապատասխան հողաշինարարական գործը ներկայացնելու Գեղարքունիքի մարզպետին՝ ՀՀ Կառավարության ,,Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման,, միջգերատեսչական հանձնաժողովի քննարկմանը ներկայացնելու համար:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ՍԼԱՎԻԿ

2. ԱՐՇԱԿՅԱՆ ՏԻԳՐԱՆ

3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՄԽԻԹԱՐ

4. ԴԱՎԵՅԱՆ ՄԱՆՎԵԼ

5. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՏՅՈՄ

6. ԿՆՅԱԶՅԱՆ ԳԱԳԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՌՈԲԵՐՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ**